*149. Նախադասությունն ընդարձակի՛ր՝ ե՞րբ, երբվանի՞ց, որքա՞ն ժամանակ, մինչև ե՞րբ  հարցերին պատասխանող բառեր կամ բառակապակցություններ ավելացնելով:*

**Երեկ մի շատ-շատ տարօրինակ բարձր ճռռոց եմ լսում:**

**Երեկ ժամը 5-ին ես իմ կարծիքն ասել եմ:**

**Գնաց, գնաց, հասավ մի փոքրիկ, գեղեցիկ, տարօրինակ քաղաքի:**

**Բարի ճամփորդ ծաղրածուն խոր գլուխ տվեց ու հեռացավ հեռու երկրներ:**

**Բարի նավաստին բաց ծով էր դուրս եկել:**

**Ծովն արդեն ուժեղ փոթորկել էր:**

**Թռչունները չվելու  էին հեռու-հեռու տաք երկրներ:**

*150.  Տրված հարցերին պատասխանի՛ր:*

*Ո՞վ ես:*

**Ես Մարի Հարությունյանն եմ**

*Բնավորության ի՞նչ լավ գծեր ունես:*

**Կարողանում եմ դաշնամուր նվագել:**

*Բնավորությանդ մեջ ի՞նչն ես ուզում շտկել:*

**Ավելի լավ սովորել:**

*Ո՞ւմ հետ (ի՞նչ տարիքի, ինչպիսի՞ մարդկանց հետ) ես ուզում էր ընկերություն  անել:*

**Ես ուզում եմ անել ընկերություն բարի, աշխույժ մարդկանց հետ:**

151. Տրված բառերն ըստ հոմանիշության(իմաստների մոտիկության) բաժանի՛ր հինգ խմբի:

Մնացուկ, մնացորդ, խորդանոց, ոստ, շյուղ, թափոն, մառան, հանդիմանանք, նկուղ, կասկած, թերմացք, նախատինք, տարակույս, պարսավանք, հանդիմանություն, տարակուսանք, շտեմարան, երկմտություն, թափթփուկ, անպատվություն, երկվություն, շիվ, կշտամբանք, նպարանոց, ճյուղ, ավելցուկ, անարգանք:

**մնացուկ, մնացորդ, թափոն, թերմացք, թափթփուկ, ավելցուկ:**

**խորդանոց,  մառան, նկուղ, շտեմարան:**

**ոստ, շյուղ, շիվ, ճյուղ:**

**հանդիմանանք, նախատինք, պարսավանք, հանդիմանություն, անպատվություն:**

**կասկած, տարակույս, տարակուսանք, երկմտություն, երկվոյուն:**

152. Տրված արտահայտությունները գործածելով՝ մի պատմություն հորինի՛ր:

Երկու ոտքը մի մաշիկ դրեց: Դռնեդուռ ընկավ: Կապանք- ներից ազատեց: Զգաց մոտենալը: Խորամանկությամբ ոչ ոք նրա հետ չափվել չէր կարող: Այդտեղ էլ երկար չմնաց: